Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 08.10.2021 թվականին տրվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Կարեն Սարուխանյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 08.10.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Կարեն Սարուխանյանը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 3/4 հասցեում գտնվող հողամասում իրականացրել է գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրերից դուրս հողարկավորություն, որոնք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներ են:

2021 թվականի հոկտեմբերի 08-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 29-ին իրավիճակ են վարչական վարույթի լսմանը, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Կարեն Սարուխանյանը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղվող հակաիրավական, մեղավոր (ղիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է ղիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության

հակաիրավական քնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրերից դուրս հուղարկավորության իրականացումը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հազարապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 156.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 156.1-րդ, 219-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇԵՑԻ

- Կարեն Սուրենի Սարուխանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
- Կարեն Սուրենի Սարուխանյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
- Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՇԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2285

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 4/2-1 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ՄԱՍՈՒՄ (ՆԱԽԿԻՆ ՏԱՐՈՆ-2 ԿՈՏՐԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔ) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՈՌՈՂԻԿ ԻՎԱՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուդիկ Իվանի Մեծխանյանի (ծնված՝ 03.09.1962թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 07.10.2021թ. տրված թիվ 3114 (նոտարական ակտի կոդ: 741-20211007-88-5435117) հայտարարությունը, Բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 29.01.2021թ. Վանաձորի համայնքապետարանի կողմի տրված թիվ 172 տեղեկանքը, «ՀԵՑ» ՓԲԸ «ԴԵԲԵԴ» մասնաճյուղի կողմից տրված տեղեկանքը, ԳԱՄՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 4/2-1 հասցեի հյուսիսային մասում (նախկին Տարոն-2 կոտրած եկեղեցու տարածք) գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.5քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1997թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.5քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1997թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ռուդիկ Իվանի Մեծխանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 4/2-1 հասցեի հյուսիսային մասում (նախկին Տարոն-2 կոտրած եկեղեցու տարածք) կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.5քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 4/2-1 հասցեի հյուսիսային մասում (նախկին Տարոն-2 կոտրած եկեղեցու տարածք) գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Տարոն-3, 6-րդ թաղամաս, թիվ 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԵՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2286

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՌԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԵՂԻՆԵ ՊԱՐՈՒՅՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հեղինե Պարույրի Հունանյանի 29.01.2021թ. թիվ 1334 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07102021-06-0049 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց թիվ 1/100 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 16.61քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 10.3քմ) մատանները 86380 (ութսունվեց հազար երեք հարյուր ութսուն) դրամով և դրանցով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 32.5քմ մակերեսով հողամասը 147030 (հարյուր քառասունյոթ հազար երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հեղինե Պարույրի Հունանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Հեղինե Պարույրի Հունանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մատանների և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2287

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՖՖՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԻՄ ԱՐԶՈՒՄԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մաքսիմ Արզումանի Սիմոնյանի (ծնված՝ 01.03.1940թ.) դիմումը, 24.11.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.08.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-119/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բաֆֆու փողոց թիվ 29ա հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 85.0քմ հողամասին կից 197.75քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1954-2004թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 282.75քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Մաքսիմ Արզումանի Սիմոնյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Բաֆֆու փողոց թիվ 29ա հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 85.0քմ հողամասին կից 197.75քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Մաքսիմ Արզումանի Սիմոնյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Բաֆֆու փողոց թիվ 29ա հասցեում գտնվող 282.75քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Բաֆֆու փողոց թիվ 29ա հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բաֆֆու փողոց թիվ 28/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՇԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2288

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐՄԱՆ ԱՐԱԽԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Մովսիսյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ**.

1. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Արման Արախկի Մովսիսյանին 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ առանց վարձատրության պահպանման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 08
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2289

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ,
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԿԱՐԵՆ
ՎԱԼԴԵՄԱՐԻ ՊԱՌԱՎՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Պառավյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Վալդեմարի Պառավյանին 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ առանց վարձատրության պահպանման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 08
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2290

ՎԱՆԱՃՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,
ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՎԱՀԱԳՆ ՖԱՐՀԱԴԻ ԴԱՎԻԹԱՎՅԱՆԻՆ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Դավիթավյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք
սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի
կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Ֆարհադի Դավիթավյանին 2021 թվականի
նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը ազատել ծառայողական պարտականությունների
կատարումից՝ առանց վարձատրության պահպանման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 08
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2291

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԵՎՀԱՏ ՄԱՐՏՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արևիատ Հովհաննիսյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ**.

1. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արևիատ Մարտունի Հովհաննիսյանին 2021 թվականի նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ը ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ առանց վարձատրության պահպանման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 08
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2292

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ԹԻՎ 132 ԲՆԱԿԱՐԱՆԸ
ԼՅՈՒՂՄԻԼԱ ԱՐՄԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԻՆԱՄ ՍԵՅՐԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդմիլա Արմենի Պետրոսյանի (1950թ.) դիմումը, ով հանդիսանում է Նան Սինամ Սեյրանի Գալստյանի լիազորված անձը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի թիվ 132 չորս սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի թիվ 132 չորս սենյականոց բնակարանը 36 500 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Լյուդմիլա Արմենի Պետրոսյանին և Սինամ Սեյրանի Գալստյանին:

3. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 132 բնակարանի վարձակալներ՝ Լյուդմիլա Արմենի Պետրոսյանին և Սինամ Սեյրանի Գալստյանին:

4. Համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ Լյուդմիլա Արմենի Պետրոսյանի և Սինամ Սեյրանի Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առավաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2293

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԵՐԿԱՍԻ ՓՈԴՈՑԻ ԹԻՎ 15 ՇԵՆՔԻ ԹԻՎ 23 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԼՎԱՐԴ
ՀՐԱՁԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Հրաչիկի Սիմոնյանի (1956թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ **որոշում եմ**.

1. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Չերկասի փողոցի թիվ 15 շենքի թիվ 23 չորս սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2. Վանաձոր քաղաքի Չերկասի փողոցի թիվ 15 շենքի թիվ 23 չորս սենյականոց բնակարանը 45 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով, որպես սեփականություն, օտարել նշված բնակարանի վարձակալ՝ Ալվարդ Հրաչիկի Սիմոնյանին:

3. Վանաձոր քաղաքի Չերկասի փողոցի թիվ 15 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ՝ Ալվարդ Հրաչիկի Սիմոնյանին:

4. Համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ Ալվարդ Հրաչիկի Սիմոնյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրա սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ
ՊԵՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՇԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2021 թվականի N 2294

«ԷՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ՝ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ դիմումները, ղեկավարելով Վանաձոր համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 114-Ն որոշման 2-րդ հավելվածի 17-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1 Թույլատրել «ԷՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը գովազդային վահանակներ տեղադրելու նպատակով, համաձայն կից հավելվածների, վարձակալության իրավունքով, 1 ամիս ժամկետով՝ նոյեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 8-ը, օգտվելու Վանաձոր քաղաքի հետևյալ փողոցների լուսավորության մետաղական հենասյուներից.

1. Բաղրամյան փողոց՝	20 (քսան) հատ,
2. Համբարձումյան փողոց՝	20 (քսան) հատ,
3. Կ.Դեմիրճյան փողոց՝	40 (քառասուն)
հատ,	
4. Կոմիտաս վարդապետի հրապարակ (Նախկին՝ Լոռվա հր.)՝	10 (տասը) հատ,
5. Կոմիտաս վարդապետի հրապարակին (Նախկին՝ Լոռվա հր.)՝ հարակից կամուրջ՝	20 (քսան) հատ,
6. Հալաբյան կամուրջ՝	16 (տասնվեց)
հատ,	
7. Թումանյան փողոց՝	40 (քառասուն)
հատ:	

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ «ԷՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» ԱԶ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել թվով 166 (հարյուր վաթսունվեց) հենասյուներից օգտվելու համար վարձակալության պայմանագիր՝ ամսական վարձավճարի չափ սահմանելով 1 (մեկ) հենասյան համար՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2295

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂ 21Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԳԱՅԱՆԵ ՊԱՎԼՈՒՇԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Պավլուշի Հարությունյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1910836 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Սպանդարյան փող թիվ 21ա հասցեում գտնվող Գայանե Պավլուշի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Ս.Զորյան փողոց, 21/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2296

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 80 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԵՂԱՏԱՆ ԶԲԱԴԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Լյովայի Առաքելյանի դիմումը, 27.01.2021թ. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԼԴ/3617/02/19 քաղաքացիական գործով վճիռը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 80 հասցեում գտնվող դեղատան գրադեցրած 0.04186հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 80 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մարշալ Բաղրամյան պողոտա, թիվ 20/4 դեղատուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2297

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1775 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 16.10.2019թ. թիվ Կ-16102019-06-0050 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29082019-06-0057 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 25 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 1775 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 25 սեպտեմբերի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 63-1/5-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված աստիճանահարթակը և դրանով զբաղեցված հողամասը Ստեփան Սլավիկի Մարտիրոսյանին օտարելու, հարթակի և հողամասի գործառնական նշանակությունները փոխելու մասին» թիվ 1775 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում «օտարելու» բառից հետո հանել «, հարթակի և հողամասի գործառնական նշանակությունները փոխելու» բառերը:
2. Որոշման նախաբանում «ղեկավարվելով» բառից հետո հանել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշմամբ,» բառերը:
3. Որոշման նախաբանում «35-րդ կետի գ)» բառերը փոխել «35-րդ կետի բ)» բառերով:
4. Որոշումից հանել 1-ին և 2-րդ կետերը:
5. Որոշման 3-րդ կետում «75276 (յոթանասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունվեց)» բառերը փոխարինել «338750 (երեք հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն)» բառերով:
6. Որոշման 3-րդ և 4-րդ կետերը կարդալ որպես 1-ին և 2-րդ կետեր:
7. Որոշման 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ Նոր 3-րդ կետով.
«3. Ստեփան Սլավիկի Մարտիրոսյանին՝ հասարակական նշանակության 22.14քմ մակերեսով աստիճանահարթակի օտարման համար սահմանված վճարի տարբերությունը՝ (338750-75276) 263474 (երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր յոթանասուն չորս) դրամ գումարը վճարել 900235401131 հաշվահամարին»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱԵՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2298

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 34/14-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դշխուհի Իոսիֆի Գոգոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21112014-06-0019 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 26.10.2021թ. սեփականության իրավունքի թիվ 3754 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20211024-105-5472352) վկայագիրը, 25.10.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3755 (նոտարական ակտի կոդ: 843-20211024-84-5472335) վկայագիրը (լրացուցիչ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 34/14-2 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 34/15 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2299

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ 2/16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՈՐԵՏԱ ՄԱՄԻԿՈՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորետա Մամիկոնի Խաչատրյանի 18.08.2021թ. թիվ 11957 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29102021-06-0057 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի ա) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 2/16 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 28.05քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.21քմ) կիսակառույց բնակելի տունը 140790 (հարյուր քառասուն հազար յոթ հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 525.0քմ մակերեսով հողամասը 1515940 (մեկ միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Նորետա Մամիկոնի Խաչատրյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նորետա Մամիկոնի Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել կիսակառույց բնակելի տան և հողամասի առավաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2300

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈԴՈՑ ԹԻՎ 122 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀՈԴԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Այբերտ Սամվելի Վանյանի 30.01.2021թ. թիվ 1523 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների քննադիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 122 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 44.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 40.9քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 44.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 122 շենքի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 122/46 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2301

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՐՈՏԱԾ ԹԻՎ 61/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Որբերտի Իշխանյանի 10.09.2021թ. թիվ 12922 դիմումը, ԱՐՄԵՆ ՌՈՒԴԻԿԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների քննադատական, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, դեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

- Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 61/1-1 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 13.17քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 12.51քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 13.62քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
- Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
- Փոխել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 61/1-1 հասցեում գտնվող 0.001362հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությամբ՝ քնակավայրերի քնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի նկատմամբ հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կաղապարի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աթուլյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված տաղավարի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
- Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 61/1-1 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 61/3 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2302

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՆԱ ԿԱՐԱԽՍԻ
ՋԵԼԵԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Կարախիսի Ջելեզյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052021-06-0043 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց 23 հասցեում գտնվող Աննա Կարախիսի Ջելեզյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Մ.Մաշտոցի փողոց, 23/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2303

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 98Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Հայկի Գևորգյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1740839 վկայականը, 16.09.2021թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 3166 (նոտարական ակտի կոդ: 843-20210824-84-5335351), թիվ 3167 (նոտարական ակտի կոդ: 843-20210911-84-5377870) վկայագրերը, 15.09.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3165 (նոտարական ակտի կոդ: 843-20210914-84-5381548), թիվ 3168 (նոտարական ակտի կոդ: 843-20210911-84-5377861) վկայագրերը և ղեկավարելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 98Գ հասցեում գտնվող մառանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 98/37 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2021 թվականի N 2304

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈԴՈՑ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱԴԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՐԱՉՅԱ ՀԵՆՐԻԿԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչյա Հենրիկի Անդրեասյանի 09.06.2021թ. թիվ 8175 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15102021-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

